ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

14 նոյեմբերի 2019 թվականի թիվ 449 – Ա

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ 2019 ԹՎԱԿԱՆԻՆ ՈՌՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2002թ. սեպտեմբերի 19-ի թիվ 1796-Ն որոշման 1-ին հավելվածի 1-ին կետով,

Կարգադրում եմ.

1. ՀՀ Տավուշի մարզում 2019 թվականին «Տավուշ» ՋՕԸ-ի կողմից ոռոգման սեզոնի ընթացքում առաջացած խնդիրների ուսումնասիրության և լուծումների վերաբերյալ առաջարկությունների ներկայացման նպատակով ստեղծել աշխատանքային խումբ՝ հետևյալ կազմով.

Մերուժան Հարությունյան – խմբի ղեկավար, Տավուշի մարզպետի օգնական
Աղաբեկ Գալստյան – Տավուշի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՀԳՄ ՏՍ համակարգման բաժնի վարիչի ժ/պ
Դավիթ Մխիթարյան – Տավուշի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և ՀԾ հարցերով բաժնի վարիչ
Վաղարշակ Սուքոյան- Տավուշի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ
Միքայել Ղալումյան - Տավուշի մարզպետարանի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ
Խաչիկ Ամիրաղյան- Տավուշի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և ՀԾ հարցերով բաժնի գլխավոր մասնագետ:

2. Աշխատանքային խմբին՝ 14-օրյա ժամկետում Տավուշի մարզպետի քննարկմանը ներկայացնել մարզում 2019 թվականին «Տավուշ» ՋՕԸ-ի կողմից ոռոգման սեզոնի ընթացքում առաջացած խնդիրների լուծման ուղղությամբ նախատեսվող միջոցառումների ծրագիր:

11/14/2019

X

ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ
Թ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Signed by: STEPANYAN TATUL 2501680073

14 նոյեմբերի 2019թ.
ք. Իջևան